



## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏՆԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀՍԱՏԱՏՄԱՆ ՅՅ-ՐԴ ՏԱՐԵԿԱՐԶԻ ՆՃՈՒՄԸ ՍՓՑՈՒՌՔՈՒՄ

(Քաղված Սփյուռքի հայկական մամուլից)

### ՐՈՒՆՆՈՍ-ԱՅՐԵՍՈՒՄ

Սովետական Հայաստանի հռչակման տարեդարձի աննախընթաց տոնակատարության ժողովրդային լայն զանգվածներ մասնակցեցին. կարծես տեղաշարժ էր: Ամեն կողմից, մոտ ու հեռու արվարձաններից, ամեն սեռից ու տարիքից մարդիկ շարժվում էին և խուժում դեպի հանդիսարահ: Որի՞ հողն էր աննպաստ օդը, սաստիկ տոթը, ուշ դիշերին վերադարձի ժամանակ փոխադրական միջոցների պատճառելիք դժվարությունները: Ազգի իրական ազատության հասկացողությունը խոր արմատ է ձգել հայ մարդկանց ու երիտասարդ սերնդի մտքին մեջ ու հողուն խորը:

Նոյեմբեր 28, շաբաթ երեկոյան ժամը 8-ն է: Գնում ենք գլխավոր հանդեսին: Հայ կենտրոնում ասեղ ձգելիք տեղ չի մնացել: Մանոթներ ձամբա են խնդրում. մտնում ենք սրահը: Մեր նազելի աղջիկներից երկուսասնյակից ավելի պաշտոնի վրա են Սովետական Հայաստանի դրոշի գույներով թեկապերով և ժպտադեմ ու բարեկիրթ հյուրասիրություն, ճերմակ մեխակներով զարդարում են հանդիսականների կուրծքերը:

Ժամը 9-ն է: Դիտում ենք սրահը բեմի ներսից, օթյակներից: Մարդկային հեղեղ է: Բազմաթիվ անձեր ոտքի վրա են: Խայտում են սրտերը Հայրենիքի բոցավառ սիրով: Բեմավար պարոն Վ. Օզգայան մոտենում է բարձրախոսին: Ծանուցում է ներկայությունը Սովետական դեսպանատան բարձր պաշտոնյաների և բարեկամ երկրների— Ռումինիա, Լեհաստան, Բուլղարիա, Չեխոսլովակիա, Ալբանիա և այլն— դիվանատների ներկայացուցիչներին: Հոտնկայա ծափահարվում էր յուրաքանչյուր դելեգացիայի մուտքը: Առաջին շարքերում նստած հյուրերի մեջ նշմարելի են հայկական կազմակերպությանց ու հայրենակցական միությունների վարչական անդամները և Ռոսարիո Հայ գաղթականները:

Րի միության մեծահարգ ատենապետ պարոն Տիրան Յուսուֆյանը: Բացվում է վարագույրը: Բեմի կողմերին ղետեղվել են պատկերներ Արգենտինայի վսեմաշուք նախագահ զոր. Փերոնի և հանգուցյալ տիկնոջը՝ Եվային: Մեջտեղից՝ Սովետական Հայաստանի մեծադիր դրոշակը՝ ՅՅ-րդ տարելիցի վերտառությունը, որ կարծես ժպտում է իր ժողովրդին, և ժողովուրդը ողբորությունը և երկարատև ծափերով ողջունում է Մայր Հայրենիքի սրբազան դրոշակը: Բացման խոսք ասում է կազմակերպիչ հանձնախմբի նախագահ պարոն Զորջ Միրաբյանը՝ դրավոր, կարճ և իմաստալից, արժանի գնահատանքի: Սուսցվել են բազմաթիվ հեռագրեր երիտասարդական կազմակերպություններից, Գորգորայից և բարեկամ հաստատություններից: Արգենտինայի պետական կազմից շնորհավորական հեռագրեր լրվել են Բանակի, Մովային, Հաղորդակցություն, Հանրային շինարարությունների և այլ նախարարությունների կողմից: Երբ ծանուցման կարգին ընթերցվում է նախագահ Փերոնի հեռագիրը, բովանդակ սրահը հոտնկայա երկարատև ծափերով գնահատում է արգենտինա-սովետական բարեկամության քաղաքականությունը: Տիրում վրտություն: Կրկին ոտքի է կանգնում ժողովուրդը: Երկյուղած հարգանքով ղեկնդրում է Արգենտինայի և Սովետական Հայաստանի հիմները: Բեմի վրա է հանձնախմբի քարտուղար Հ. Ղրիտյանը՝ մեկը անխոնջ աշխատողներից, երիտասարդ համայնարանական: Սպաներեն և գրավոր է նրա ճառը. խնամված, զուսպ և կուռ, որ համախ ընդհատվում է ծափերով: Ծափերի տակ բեմ է բարձրանում «Շարժում» խմբագիր Ար. Օլմեզ, որ հայրենաշունչ բանախոսությունը գովքն է հյուսում Հայաստանի իրական ազատագրության և հոն կատարված հրաշանման վերելքին:

Վերջին ու գլխավոր բանախոս՝ պարոն Արամ Տեյիրմենջյան:

Սրահը ոտքի կանգնած՝ երկարատև ծափահարում է, երբ կարմիր վարդերից կազմված խոշոր ծաղկեփունջ է նվիրվում Սովետական դեսպանատան մշակութային կցորդին: Թունդ ու որոտընդոտ ծափողջուններով վավերացվում են պատճենները երկու հեռագրերի, որոնք հետագային ղրկվեցին Արգենտինայի վեսմաշուք նախագահ զորավար Փերոնին, հայ հայրենասեր գաղութի երախտիքն ու քաղաքացիական հավատարմությունը ներկայացնող, իսկ մշուքը Երևան, Հայաստանի նախագահ Մ. Պապյանին, արգենտինահայ գաղութի սերը, համակրանքն ու մաղթանքները հայտնող՝ Մայր Հայրենիք Սովետական Հայաստանի մշտական անասանություն համար:

Սկսում է ընտանեկան պարահանդեսը, որ տևում է մինչև կիրակի առավոտյան լուսաբացը, և 3.000-ից ավելի հայ հայրենասերներ բաժանվում են Հայ կենտրոնից, իրենց հետ տանելով հայրենական տոնակատարության լավագույն ապրումները:

**ՄԱՐՍԵՆՈՒՄ**

Նոյեմբեր 28-ի շաբաթ երեկոն Մարսելի և շրջակա քաղաքներու հայութան համար մեծ տոնի օր մըն էր դարձած: Սրեր առաջամեն հայ տուն իրարանցումի և մեծ պատարասություն վրա էր՝ փառավորագես և արժանավոր կերպով դիմավորելու համար Սովետական Հայաստանի 33-րդ տարեդարձը:

Կազմակերպիչ հանձնախումբը ըստ ընկալյալ սովորության ընտրած էր խոտակահան Կերդիի անվան թատրոնը իր հարակից լայնարձակ, շքեղ սրահներով:

Հազարավոր հայեր երեկոյան ժամը 8-ին իսկ ոչ միայն ընդարձակ թատերասրահը իր խոշորագույն ամփիթատրոնով լեցուցած էին, այլև հարակից ընդարձակ սրահները խիստ կերպով, բերնե բերան սեղմված, պարտավորեցին ուշացողները ետ վերադառնալու և ղրկվելու այդ փառահեղ և մեծաշուք հավաքույթին:

Բացումը կատարեց Գապուանել արվարձանի ԺԱՅ-ի՛ երկսեռ երգչախումբը՝ երգելով «Մարսելեզ» և «Սովետական ազատ աշխարհ Հայաստան» հիմները:

Օրվան առաջին ճառախոսն էր օրիորդ Զաքարյան, ժաֆիստ, որ սահուն ֆրանսերենով մը հանուն ծագումով հայ ֆրանսուհիներու, իր հիացումը հայտնեց Սովետա-

կան Հայաստանի հսկայաքայլ հառաջդիմություն, և ծանրացավ խաղաղության դատին վրա, որուն փարած են միլիոնավոր անձինք, առանց ազգի, ցեղի, դավանանքի և գաղափարի խտրության:

Երկրորդ բանախոսն էր ֆրանսահայության քաջածանոթ, թունդ հայրենասեր Թադվոր Խաչիկյանը:

Մեջընդմեջ տեղի ունեցան արտասանություններ, երգեր և ազգային պարեր:

Ապա ներկայացվեցան Սովետական Հայաստանեն նոր ստեղծած ժապավեններ:

Կես գիշերին սեղջ սկսան եվրոպական պարերը մինչև արևածագ:

Ժողովուրդը և պարող դուզգերու բանակը կիրակի առտու ժամը 5-ին դժվարավ բաժնրվեցան այդ հավաքական, տաքով ու խանդավառ մթնոլորտեն, զեղեցիկ և անմոտանալի հիշատակներ տանելով իրենց հետ:

**ԲՈՍՏՈՆՈՒՄ**

Բոստոնի հայրենասեր հայությունը, ինչպես ամեն տարի, այս տարի ևս իր պարտականության մեջ էր, այդ երջանկարեր թվականի՝ Հայաստանի սովետականացման տարեդարձին առթիվ, իր զգացած դիտակցական սիրույն արգասիքը տալու համար փութացած էր նոյեմբեր 29-ի կիրակին, Նյու-Ինգլենդ Մյուզիկըրը սրահը, Բոստոնի Ազգային խորհուրդի նախաձեռնած տոնակատարության:

Տարեդարձի այս հանդիսությունը սկսավ Ամերիկյան ազգային ու Սովետական Հայաստանի պետական հիմներով, զորս նվագեց դաշնամուրի վրա օրիորդ Մերի Հարությունյան: Ներկաները հոտնկայս ունկնդրեցին երկու երգերն ալ՝ հարգանքով և խոր զգացումով:

Այնուհետև օրվա ատենագետ՝ Ա. Ճանճիկյան հայրենասիրական կարճ ելույթով մը բացավ ժողովը, արտահայտվելով նախ նոյեմբեր 29-ի նշանակության մասին: Ողջունեց սրտագին կերպով Սովետական Հայաստանի 33-րդ և Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 85-րդ տարեդարձները: Անոր հայրենասիրական հորդուն զգացումով արտահայտությունը բուռն ծափերով գնահատվեցավ:

Նախ հրավիրվեցավ հայրենակցականներու ներկայացուցիչ պարոն Մ. Ալլայան, որ կարճ ուղերձով մը ըսավ թե՛ «Թեև օվկիանոսների կրաժնեն հազարավոր մղոններով մեզ մեր Հայրենիքեն, բայց արյունի եղբայրությունը չեն կրնար երբեք բաժնել և մեր զգացումներն ու սերը կմիախառնվին այսօր մեր Հայրենիքի եղբայրներու ցնծություններուն»:

1. ԺԱՅ (Jeunesse Arménienne de France) - Ֆրանսահայ երիտասարդություն — Ֆրանսիայում հայկական երիտասարդական առաջադիմական կազմակերպություն:

Մի առ մի հիշեց նաև հայրենակցականներու հիմնած ավաններու անունները, անոնց մեծնալն ու հառաջդիմութիւնը: Ըսավ նաև թե այդ «հին» ավանները «նոր» անուններով պիտի հորըորջվին մեր Հայրենիքին մեջ, որպես խնկելի կոթողներ:

Ապա հրավիրվեցավ առաջին ատենախոսը՝ Արմեն Միրիջանյանը, Նյու-Յորքէն: Հարգելի ատենախոսը իր հանդարտ և բացատրողական ատենախոսութեամբ, իրեն կապված պահեց մինչև վերջ ներկաները:

Հարգելի ատենախոսին իրատես վերլուծումներով և դաստիարակիչ այս ատենախոսութիւնը գոհունակութեամբ ունկնդրվեցավ ներկաներեն և արժանացավ ջերմ ծափահարութեան:

Վերջին խոսողը եղավ Ամերիկահայ Ազգային խորհուրդի վարիչ-տնօրեն վերապատվելի Ծ. Ազնակյան: Ան նախ ըսավ թե՛ «33 տարի առջ քաղաքական մեծ և փայլուն իրողութիւն մը տեղի ունեցավ մեր Հայրենիքին մեջ — Հայաստանը սովետակառուցավ: Այն ատեն, երբ մեր ժողովուրդը կապրեր վերջին ծայր հուսահատական և վճռական ըրպեններ, որ այլևս անդունդին եզրը հասած էր, պիտի ջնջվեր, պիտի անհետանար վերջապես, եթե հայ ժողովուրդին փափաղին և պահանջին վրա չհասներ օգնութեան ոռւս մեծ ու ազնիվ ժողովուրդը»: Հետո ցցուն փաստերով, օտարներու վկայութեամբ իսկ հայտնեց թե՛ այսօր մեր Հայրենիքը այնքան շատ ու շուտ կհառաջդիմե թուր ճակատներու վրա, դիտու պտույտ տալու աստիճան, որ դարձած է բացարձակապես ճարտարարվեստականացած երկիր մը, դիւ-անցներով շատ մը ուրիշ երկիրներ: Այդ երկիրը կհասցնե այնպիսի աչքառու դեմքեր, որոնք միջազգային համբավի կտիրանան:

Երկու ատենախոսներն ալ շեշտեցին Ազգային խորհուրդի հզորացումը մեր գաղութներուն մեջ, և կոչ ըրին բոլորին միանալ անոր շուրջ՝ զայն ազդու մարմին մը դարձնելու և պայքարելու համար մեր նվերական դատին ի խնդիր: Երկուքն ալ դնահատվեցան ժողովուրդին ջերմորեն:

Ամենեն վերջ ներկայացվեցավ «Կաթողիկոսի ընտրութիւնը» շարժապատկերը, որ շատ պատշաճ ու հարմարագոյնն էր Ամենայն Հայոց Հայրապետի 85-ամյակի առթիւ: Պատասխին վրա տեսանք աշխարհական թիկերական բոլոր պատգամավորները, տեղի ունեցող ժողովները ու խոր հավատքով դիտեցինք անոր ընտրութիւնն ու օծումի արարողութիւնը:

Պատկերի վերջանալուն, տոնակատարութիւնն ալ լրացավ և ժողովուրդը խանդավառ զգացումներով լեցուն, հայրենասիրական ոգիով աուլցուն՝ բաժնվեցավ սրահին:

**ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ**

Ազգային խորհուրդի նախաձեռնութեամբ նոյեմբերի 29-ին Ռըշիըն Սոսայիտիի սրահին մեջ հայրենասերներու կողիկ բազմութեան մը ներկայութեամբ տոնվեցավ Հայաստանի խորհրդայնացման 33-րդ տարեդարձը:

Օրվան ատենապետ Տաճատյան ժողովը բանալով, ըսավ.

«Այսօր ազգային տոնի և ցնծութեան օր է մեզ համար: Այսօր հոս հավաքված ենք տունելու Հայաստանի խորհրդայնացման և հետևաբար հայ ժողովուրդի ազատագրութեան 33-րդ տարեդարձը:

1920 նոյեմբեր 29 բախտավոր թվականը հայ ժողովուրդի ազատագրութեան տոնն է կըսենք անոր համար, որ հայ ժողովուրդը իր արյունի և դուրամի դարավոր պատմութենին առած դասերով՝ վերջապես գիտցավ ընտրելու նոր ուղեգիծ մը...»:

Ատենախոսութենեն վերջ տեղի ունեցավ մտավառութիւնը:

Յուցադրվեցան «Հայաստանն այսօր» և «Հայաստանի երգն ու պարը» շարժանկարները, և ներկաները տեսնելով ակնարկված վերելքի և շինարարութեան իրական ապացույցները՝ գոհունակութեամբ և ծափերով ողջունեցին:

Երեկոյան ուշ ատեն ներկաները բաժնվեցան մեծ գոհունակութեամբ, իրենց հետ տանելով տոնակատարութեան շինիչ և խանդավառ տպավորութիւնները:

**ՓԱՐԻԶՈՒՄ**

Համայն հայ ժողովուրդը, երկրին մեջ թե երկրեն դուրս, միևնույն հավատքով և խանդավառութեամբ այս տարի ևս տոնեց նոյեմբեր 29-ը:

Պայե զը Մյուսուլայիտե-ի հսկա սրահները վերով ու վարով լեցված էին: Անհնարին էր նույնիսկ ոտքի վրա տեղ մը գտնելը: Հարչուրավոր մարդիկ ստիպվեցան հտ վերադառնալ տեղի շտրութեան պատճառով: «Այս տարի աննախընթաց տարի մըն է», կըսեին շատեր: Արդարեւ, պետք է խոստովանիլ, որ այս տարվա բազմութիւնը աննախընթաց էր:

Ամենուրեք հայ ժողովուրդը իր անհուն երախտագիտութիւնը հայտնաբերեց հանդեպ ոռւս մեծ ժողովուրդին, որու եղբայրական աջակցութեան շնորհիւ հայ ժողովուրդը փրկվեցավ իրեն սպառնացող ֆիզիկական, բարոյական և տնտեսական փճացումին և տիրացավ պետական անկախութեան:

Ինչպես շատ իրավացի կերպով հայտնեց նախկին մինիստր և հայ ժողովուրդի լավագոյն բարեկամ պարոն Ժյոտան Գոտար,

որ կնախագահեր Փարիզի տոնակատարութեան հանդեսին, — «Այդ պատմական ճշունագարը Արարատը, որուն գագաթնն թռավ աղավնին ու ձիթենիի ճյուղը կտուցին վերադարձավ ավետելով ջրհեղեղի վերջը, այդ աղավնին հակառակ իրեն սպառնացող փոթորիկներուն ու մրրիկներուն, դարերն ի վեր կապրի ու կշարունակե իր թոխըքը և այսօր, երբ դարձյալ աշխարհ անկայուն վիճակ մը ունի, ուր խաղաղութիւնը միշտ վտանգի տակ է, և համայն մարդկութեան գլխուն վրա թողված է արդիան կործանարար զինքերու ահալոր ստվերը: Մաղթենք, որ մոտ օրին այդ միևնույն աղավնին ձիթենիին ճյուղը իր կտուցին գա մեզի ավետելու, որ վերջապես ժողովուրդներու եղբայրութիւնը տարած է խաղաղութեան մեծ հաղթանակը»:

**ՖԻԱԿԵԼՖԻԱՅՈՒՄ**

Տարին անգամ մը, արտասահմանի հայութիւնը հրճվանքով և հպարտութեամբ կտոնեն Սովետական Հայաստանի հիմնադրութեան և հայ ժողովուրդի ազատագրութեան տարեդարձը:

Դարերու դերութենն, շարշարանքներն և կոտորածներն հետո, 1920 թվէն ի վեր մեր ազգակիցները կապրին ազատ և ապահով կյանք մը ու նվիրված են Հայրենիքի վերաշինութեան սրբազան աշխատանքին:

Ազգային խորհուրդի տեղվույս մասնաճյուղի նախաձեռնութեամբ այդ օրը նշելու և ուրախութեամբ տոնելու ժողովը տեղի ունեցավ Ֆիլադելֆիո Վալ Դրլլու Սի էյ-ի սրահին մեջ, դեկտեմբերի 13-ի կիրակին, ատենապետութեամբ բանաստեղծ Կարապետ Սիտալի:

Կ. Սիտալը ամփոփ կերպով թվեց Մայր Հայրենիքի մեջ ամեն ճակատի վրա կատարված հսկա հառաջդիմութիւնները, որոնք հպարտութեամբ կհիշվին նույնիսկ Եվրոպայի և զանազան երկիրներն Հայաստան այցելող օտար պատգամավորութիւններու կողմն և ավելցուց, որ այդ բոլոր հաջողութիւնները մենք կպարտինք հոն տիրող խաղաղութեան, բարի դրացիական հարաբերութեան և սովետական ժողովուրդներու օժանդակութեան:

Ապա կարճ ուղերձներ ըրին Ազգային խորհուրդի կողմն Ավետիս Երամյան, Արաբկիրի հայրենակցականն՝ Համազասպ Սարգիսյան, Մալաթիացիներու կողմն՝ Դ. Պաղտասարյան, Սեբաստացի հայրենակիցներն՝ Բ. Թերճանյան, Ս. Դ. Հնչակյան կուսակցութեան ներկայացուցիչ Թորգոմ Մովսեսյան և Հայաստանի բարեկամ Հակոբ Գուլումջյան:

Բոլոր խոսողներն ալ նշեցին օրվա կարևորութիւնը, և կոչ ըրին ներկաներուն զորավիգ կանգնել Ազգային խորհուրդին և բարեկամ կազմակերպութիւններուն, մինչև մեր դատի արդար հաղթանակը:

Վերջին խոսողն էր Ազգային խորհուրդի տնօրեն վերապատվելի Վրթանես Աղնակյան, որ ըսավ, թե՛ մենք կտոնենք Սովետական Հայաստանի տարեդարձը, որովհետև ան մեր ժողովուրդին խաղաղութիւն, ապահովութիւն, լույս ու ուղղութիւն տվավ, կաճի, կզարգանա և կհառաջդիմե մեր երկիրը, անընդհատ կարտագրեն մեր գործարանները և մեր ժողովուրդը կապրի լիառատ կյանք, զոր կարելի չէր բաղդատութեան դնել որևէ երկրի հետ ամեն կերպով:

Վերջավորութեան ներկայացվեցավ «Հայաստանն այսօր» գունավոր շարժանկարը, որը լավ տպավորութիւն թողուց և ժողովուրդը մեկնեցավ հայրենասիրական ջերմ դրացումներով:

**ԲՈՒՆԱՐԵՍՏՈՒՄ**

Կիրակի, 29 նոյեմբեր, Սովետական Հայաստանի դոյութեան 33-րդ պանծալի տարեդարձին առթիւ, Ռումեն-սովետ բարեկամութեան տան, Առլուսի և Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան կազմակերպութեամբ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ Ռումեն-սովետ բարեկամութեան տան սրահին մեջ:

Հանդիսութեան բացումն դեռ շատ առաջ խումն բազմութիւն մը լեցուցած էր սրահը, որ շքեղորեն զարդարված էր դրոշներով և լողունգներով:

Ներկա էին մայրաքաղաքի բազմաթիւ աշխատավորներ, արվեստի, մշակույթի ներկայացուցիչներ, արվեստի, մշակույթի ներկայացուցիչներ, և հայ աշխատավոր մարդիկ:

Խանդավառ մթնոլորտի մը մեջ հանդիսութիւնը սկսավ Ռումեն ժողովրդական Ռեսպուբլիկայի, Սովետական Միութեան և Սովետական Հայաստանի հիմնելով, զորս երգեց Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան երգչախումբը:

Օրվա պրեզիդիումին բնմ բարձրանալն հետո, ակադեմիական Շտեֆան Միլբու բացված հայտարարեց հանդիսավոր նիստը, խոսք տալով դոկտ. Գր. Բամպուրջյանի, նախագահ՝ Ստեփան Շահումյանի անվան Մշակույթի տան:

Հանդիսավոր նիստին հաջորդեց խնամքով պատրաստված ճոխ հայտագիր մը, որուն առաջին մասին, հայ արվեստագետներ ալ ներկայացուցին հակական, ուղմանական և ուղսական երգեր:

Նիստի վերջավորության Գարեգին Սաղաթեյան կարդաց ողջունի հեռագիրներ՝ ուղղված Սովետական Միության և Ռուսին ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարություններուն և Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահ Մացակ Պապյանի:

### ՍՈՖԻԱՅՈՒՄ

Նոյեմբերի 29-ի առավոտը ամեն հայ տունն ներս կլուսնա ազատության հրձվանքով: Բոլոր հայրենասերներու սրտերը կուռին անխառն բերկրանքով մը, որմն ներշնչված բազմությունը ալիք-ալիք կխուժե «Գեորգի Դիմիարով» սրահը:

Ընդարձակ սրահը արդեն նեղ կուգա խուսնեամբ բազմության առջև: «Մեր Հայրենիքի ազատության տարեդարձն է այսօր», — կըսեն անցքերու առջև հանդիպողները ու զիրար կողջունեն ջերմեռանդ զգացումով:

Կհնչեն Բուլղարական, Սովետական և Հայկական հիմները, որմն հետո բեմին վրա տեղ կգրավեն գործոն նախագահության անդամները, գլխավորությամբ «Երևան»ի Կեդրոնական վարչության նախագահ Գաբրիել Գաբրիելյանի:

Պանծալի տարեդարձի առթիվ խնամված զեկույցով հանդես կուգա Գաբրիել Գաբրիելյան: Ան պատկերալից ոճով և ուժեղ փաստերով կվերլուծե Սովետական Միության խաղաղասեր քաղաքականությունը, կընդդեմ Սովետական Միության եղբայրական ժողովուրդներու ամուր կապը և ծաղկող մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի բարգավաճումը տնտեսական և կուլտուրական շահանիշերով:

Ողջունի խոսքեր ըրին՝ Բուլղար և սովետական միության կողմն դուրս. Տիմ. Պոպով և «Մալչիկա» շաբաթեղենի գործարանի բանվորական կուլեկտիվի ներկայացուցիչները:

Վերջավորության տեղի ունեցավ գրական-երաժշտական ճոխ համերգ մը:

